ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ թափուր ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների համար՝

| հ/հ | ԵՐԹՈՒՂՈՒ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | անվանումը և համարը | սկզբնակետը | վերջնակետը | տեսակը /ավտոբուսային, միկրոավտոբուսային / | սպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը /ներառյալ պահուստային ավտոբուսների թիվը/ |
| 1 | Մարտունի – Զոլաքար– Մարտունի N 25 | Մարտունու Ա/Կ | գ. Զոլաքար | ավտոբուսային | 2 |
| 2 | Մարտունի – Լիճք– Մարտունի N 28 | Մարտունու Ա/Կ | գ. Լիճք | ավտոբուսային | 2 |
| 3 | Մարտունի – Վարդենիս– Մարտունի N 32 | Մարտունու Ա/Կ | ք. Վարդենիսի Ա/Կ | միկրոավտոբուսային | 2 |
| 4 | Մարտունի – Աստղաձոր– Մարտունի N 40 | Մարտունու Ա/Կ | գ.Աստղաձոր | ավտոբուսային | 2 |

ՑԱՆԿ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ.
2. Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման լիցենզիա.
3. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայական.
4. Ավտոբուսների տեխնիկական անձնագրեր (գրանցման վկայագրեր).
5. Ավտոբուսներին ամրակցված վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր, սահմանված կարգով բժշկական հանձնաժողովի կողմից տրված՝ առողջական վիճակի մասին տեղեկանքներ.
6. Ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր.
7. Ավտոբուսը այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
8. Ավտոբուսի վարորդի՝ սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
9. Ավտոբուսների նախաուղերթային տեխնիկական զննման և բուժզննման աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը և հիմքերը՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում.
10. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ շարժական կազմի հավաքակայանի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայական՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում, ինչպես նաև ավտոբուսների ամենօրյա նախաուղերթային տեխնիկական զննումը, դրանց կայանումը և պահպանումն իրականացնելու պայմանագիր՝ գիշերակացով սպասարկվող երթուղիների համար.
11. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի (եթե սահմանված է) փոխադրման գինը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների:

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից սոսնձված, կնքված և ստորագրված, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ սոսնձված և իր կողմից ստորագրված փաթեթով: Փաթեթի փաստաթղթերը պետք է նույնպես կնքված լինեն հայտատու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից "Իսկականի հետ ճիշտ է" գրառմամբ և ստորագրությամբ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ "Իսկականի հետ ճիշտ է" գրառմամբ և ստորագրությամբ, ինչով հավաստում է դրանց իսկությունը:

Մրցույթը տեղի կունենա 2012թ. նոյեմբերի 9-ին "Մարտունու ԲՈՒԱՏԲԲԸ-ում ժամը 1200.

Հայտերը ընդունվում են ամեն օր ժամը 10-17-ը /բացի շաբաթ և կիրակի օրերից/ ք.Գավառ Գր Լուսավորիչ 36 /մարզպետարանի շենք/ հասցեով.

Հայտերի ընդունման վերջին ժամկետը 02. 11. 2012թ ժամը 1700.

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 0264-2-49-45.

Մրցույթն անցկացվում է ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման պահանջների համաձայն:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝ .

(ստորագրությունը)

*Ծանոթություն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից վերը նշված երթուղու չվացուցակը կարող է միակողմանի փոփոխման ենթարկվել.